ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան 11.12.2023թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստն անցկացվեց առկա եղանակով ՀՖԿՍՊԻ-ի Գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երևան, Ալ. Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

Նիստին ներկա էին Խորհրդի 20 անդամներից 13-ը՝

Կարեն Գիլոյան – ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Արսեն Միխայլով – ՀՀ վարչապետի օգնական

Գոհար Մամիկոնյան – ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ

Սերգեյ Աբրահամյան – ՀՀ ԿԳՄՍ նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ

Հարություն Յավրյան – ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ

Մխիթար Խաչատրյան – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս

Անահիտ Բարսեղյան – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Վարինկա Ավագիմյան – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս, Հոգաբարձուների խորհրդի քարտուղար

Լաուրա Միրզոյան – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Ժիրայր Դավեյան – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Գայանե Չիլոյան – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մագիստրանտ

Լիանա Դուդուկչյան – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մագիստրանտ

Էրիկ Երվանդյան – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Բացակայում էին՝

Արսեն Հակոբյանը – ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ

Սամվել Գևորգյանը – Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Էդուարդ Քալանթարյանը – Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան

Ռոբերտ Խաչատրյանը – Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ

Դավիթ Մոսինյանը – «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ –ի տնօրեն

Եղիշե Դավթյանը – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի մարզախաղերի ամբիոնի դասախոս

Օրակարգ

1. 11.12.2023 թ. Խորհրդի նիստի օրակարգի հաստատում:

2. ՀՖԿՍՊԻ–ի Հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 14–ի նիստի հանձնարարականների կատարման քննարկում:

(զեկուցող՝ Կարեն Գիլոյան)

3. Այլ հարցեր:

Խորհրդի անդամները օրակարգային հարցերի քննարկումից առաջ քվեարկությամբ (միաձայն) ընդունեցին Խորհրդի քարտուղար Վարինկա Ավագիմյանի ինքնաբացարկը Խորհրդի քարտուղարի պաշտոնից: 12 կողմ, 1 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ Խորհրդի քարտուղար ընտրվեց Գայանե Չիլոյանը:

Խորհրդի նիստին հրավիրվել էր նաև ՀՖԿՍՊԻ ռեկտոր Դավիթ Խիթարյանը, որը տարեկան կուտակված արձակուրդի ավարտից հետո աշխատանքի էր անցնելու 2023

թվականի դեկտեմբերի 11–ին (Խորհրդի նիստի օրը), սակայն նիստին չէր ներկայացել՝ արձակուրդի ժամկետը երկարաձգելու հիմնավորմամբ, ընդ որում առանց Խորհրդին տեղեկացնելու և համաձայնեցնելու:

Օրակարգի 1–ին հարց

Խորհրդի նիստի օրակարգը հաստատվեց քվեարկությամբ՝ միաձայն:

Օրակարգի 2–րդ հարց

Խորհրդի կողմից ձևավորված աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) դիրքորոշումները ներկայացնելու համար Խորհրդի նախագահ Կ. Գիլոյանը զեկուցող նշանակեց Գ. Մամիկոնյանին:

1. 2023 թվականի նոյեմբերի 1-ին ՀՖԿՍՊԻ–ի ռեկտորի /պարտականությունները կատարողի/ հրամանով Սահակ Անտոնյանին ՀՖԿՍՊԻ–ի Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու հարցի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 21-ին հիմնադրամի ռեկտորի պարտականությունները կատարող Լուսինե Ստեփանյանը ներկայացրել էր պարզաբանումներ՝ հղումներ անելով ՀՀ Աշխատանքային օրենգրքին, Գործատու և Աշխատող հարաբերությունները կարգավորող փաստաթղթերին: Աշխատանքային խումբը, ուսումնասիրելով ներկայացված բոլոր պարզաբանումները, պարզել է, որ խախտվել են ՀՖԿՍՊԻ–ի գիտական խորհրդի 2020 թվականի մայիսի 27-ի որոշմամբ հաստատված ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի դրույթները:

Առաջարկվեց՝ հանձնարարել ռեկտորին /ռեկտորի պարտականությունները կատարողին/ միջոցներ ձեռնարկել՝ ՀՖԿՍՊԻ–ի Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հետ կապված հարաբերությունները համապատասխանեցնել ՀՖԿՍՊԻ–ի գիտական խորհրդի 2020 թվականի մայիսի 27-ի որոշմամբ հաստատված ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին /41-րդ կետ/, հայտարարել ՀՖԿՍՊԻ–ի Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի վարիչի մրցույթ և եռօրյա ժամկետում Խորհրդին տրամադրել /գրավոր/ հաշվետվություն սույն հանձնարարականի կատարման վերաբերյալ:

2. ՀՖԿՍՊԻ–ի ռեկտորի պարտականությունները կատարողի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 54-Ա հրամանով ՀՖԿՍՊԻ–ի Մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան Տիգրան Սիմոնյանի նկատմամբ կիրառված «նկատողություն» կարգապահական տույժի վերաբերյալ հարցի քննարկման և դիրքորոշման վերաբերյալ Աշխատանքային խումբը ստացել էր պարզաբանումներ ՀՖԿՍՊԻ ռեկտորի

պարտականությունները կատարող Լ. Ստեփանյանից: Ըստ այդ պարզաբանումների՝ N 54-Ա հրամանի հիմքում նշված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության դրույթները: Ուսումնասիրելով հարցը կարգավորող օրենսդրական հիմքերը, համապատասխան իրավական փաստաթղթերը և նախադեպային իրավիճակները, Աշխատանքային խումբը պարզել է, որ Տիգրան Սիմոնյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու փաստական հենքն ապահովված չէ, բացակայում են Աշխատանքային օրենսգրքով նախատեսված հիմքերը՝ «Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը»: Ռեկտորի պարտականությունները կատարողի կողմից չեն ներկայացվել, այդ թվում՝ Հոգաբարձուների խորհրդին, Տիգրան Սիմոնյանի կողմից կատարված խախտման ծանրությունն ու հետևանքները:

Առաջարկվեց՝ ռեկտորին /ռեկտորի պարտականությունները կատարողին/ ուժը կորցրած ճանաչել ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 54-Ա հրամանը, քննարկել 2023 թվականի հոկտեմբերի 23-ի N 55-Ա հրամանի ուժը կորցրած ճանաչելու հնարավորությունը, եռօրյա ժամկետում Խորհրդին տրամադրել /գրավոր/ հաշվետվություն սույն հանձնարարականի կատարման վերաբերյալ:

3. Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է ՀՖԿՍՊԻ-ի Իրավական ապահովման բաժնի նախկին մասնագետ Գուրգեն Ավագյանի դիմումն իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը ընթացակարգային խախտումներով լուծելու վերաբերյալ: Աշխատանքային խումբը պարզաբանումներ է պահանջել Գ Ավագյանին աշխատանքից ազատելու հիմնավորումների վերաբերյալ: Պարզաբանումները ներկայացրվել են Խորհրդի անդամ, ՀՖԿՍՊԻ-ի իրավական ապահովման բաժնի ղեկավար Վ. Ավագիմյանի կողմից: Աշխատանքային խումբը պարզել է, որ ներկայացված պարզաբանումները չեն պարունակում այն հիմնավորումները, որոնք բանավոր կերպով ներկայացվել են Խորհրդին նախորդ՝ նոյեմբերի 14-ին տեղի ունեցած, նիստի ժամանակ: Նշված նիստի մասնակիցներին Վարինկա Ավագիմյանը տեղեկացրել է, որ Իրավական ապահովման բաժնի նախկին մասնագետ Գուրգեն Ավագյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Մալբրի համակարգով նրան հանձնարարված աշխատանքի չկատարման հիմքով: Խորհուրդը ներկայացրեց նաև, որ ընթացակարգային խախտմամբ աշխատանքից ազատվելուց հետո, նույն աշխատանքում դատարանի վճռով Գ. Ավագյանի՝ աշխատանքի վերականգնվելու դեպքում (ոչ աշխատակցի մեղքով պարապուրդի դիմաց վճարվելիք) գումարը ՀՀ օրենսդրության համապատասխան դրույթների համաձայն փոխհատուցվելու է ոչ իրավաչափ իրավական փաստաթուղթը վավերացրած (ստորագրած) անձի կողմից:

Առաջարկվեց՝ հանձնարարել ՀՖԿՍՊԻ–ի ռեկտորին /պարտականությունները կատարողին/ վերանայել ռեկտորի համապատասխանը հրամանը և դրա մասին զեկուցել Խորհրդին:

4. Աշխատանքային խումբը պարզել է, որ ՀՖԿՍՊԻ–ի Խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 14-ին կայացած նիստի օրակարգում ներառված 3-րդ՝ այլ հարցերի շրջանակում ավելացված և քննարկված՝ քննությունների կազմակերպման և անցկացման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցի վերաբերյալ ռեկտորի պարտականությունները կատարող Լ. Ստեփանյանի կողմից ներկայացված պարզաբանումը չի պարունակել որևէ տեղեկություն քննությունների անցկացման կարգում իրականացված փոփոխությունների վերաբերյալ, քանի որ Լուսինե Ստեփանյանի կողմից որպես պարզաբանում ուղարկվել է քննությունների անցկացման կարգը՝ փոփոխություններով և նոր խմբագրությամբ հաստատված:

Առաջարկվեց՝ հանձնարարել ռեկտորին /ռեկտորի պարտականությունները կատարողին/ ներկայացնել լսված հարցի վերաբերյալ հիմնավոր պարզաբանումներ, եռօրյա ժամկետում ներկայացնել ՀՖԿՍՊԻ Գիտական խորհրդի նիստի օրակարգում հարցը քննարկելու հիմնավորումները, նիստերի արձանագրությունները, դրան առնչվող այլ փաստաթղթեր:

5. Աշխատանքային խումբը պարզել է, որ ՀՖԿՍՊԻ–ի ռեկտորի պարտականությունները կատարողի կողմից չի տրվել պատշաճ պարզաբանում ՀՖԿՍՊԻ Խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 14-ին կայացած նիստի օրակարգում ներառված 3-րդ՝ այլ հարցերի, շրջանակում քննարկված՝ ՀՖԿՍՊԻ–ի Ներքին աուդիտի միջանկյալ զեկույցի վերաբերյալ Խորհրդի անդամի դիտարկումների վերաբերյալ: Միջանկյալ զեկույցը, Խորհրդի նիստի ընթացքում ներկայացվել և էլեկտրոնային փոստով ուղարկվել էր ՀՖԿՍՊԻ–ի Ներքին աուդիտի բաժնի պետ Վաղարշակ Մեյրոյանի կողմից:

Առաջարկվեց՝ հանձնարարել ռեկտորին /պարտականությունները կատարողին/ եռօրյա ժամկետում ներկայացնել պատասխաններ նշված դիտարկումների վերաբերյալ:

Օրակարգի հարց 3

Օրակարգի 3–րդ հարցով իրենց դիմումները ընթերցեցին ՀՖԿՍՊԻ–ի ուսանողներ Լաուրա Միրզոյանը և Գրիգոր Խաչատրյանը: Լաուրա Միրզոյանը Խորհրդի անդամներին ներկայացրեց փաստ, որ Խորհրդի անդամ ընտնվելուց անմիջապես հետո, ռեկտոր Դավիթ Խիթարյանի անունից զանգահարել են իր ընտանիքի անդամներին և հորդորել նրանց՝ ստիպել իրեն Խորհրդի նիստերի ընթացքում համակարծիք լինել միմիայն Դավիթ Խիթարյանի կարծիքի հետ: Գրիգոր Խաչատրյանը ներկաներին տեղեկացրեց, որ ռեկտորի պարտականությունները կատարող Լուսինե Ստեփանյանն իր

հետ անձնական զրույցում վարկաբեիչ տեղեկատվություն է փոխանցել իրեն՝ ՀՖԿՍՊԻ–ի Ուսանողական խորհրդի նախագահ Գայանե Չիլոյանի մասին: Գրիգոր Խաչատրյանը նշեց, որ այդ տեղեկատվությունը չի վերաբերվում ոչ ՈՒԽ–ի նախագահի գործունեությանը, ոչ էլ ուսումնառությանը, այլ նպատակ ունի լռեցնել իր համարձակ դիրքորոշումը ներկայացնող Գայանե Չիլոյանին, ով պարբերաբար Խորհրդի քննարկմանն է ներկայացնում տեղեկատվություն ՀՖԿՍՊԻ–ում տեղի ունեցող խախտումների վերաբերյալ:

Ելույթ ունեցան նաև ՀՖԿՍՊԻ–ի Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոսներ Էրիկ Մարտիրոսյանը և Արմեն Հակոբյանը, որոնց առանց հիմնավորումների և ընթացակարգային խախտումներով հեռացել են ՀՖԿՍՊԻ–ի գիտական խորհրդի կազմից:

Առաջարկվեց՝ Խորհրդի քննարկմանը ներկայացնել տեղեկատվություն բարձրաձայնված փաստերի վերաբերյալ:

Նախագահ՝ Կարեն Գիլոյան

Քարտուղար՝ Գայանե Չիլոյան